ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿՅԱՆՔ ЖИЗНЬ ЗАРУБЕЖНЫХ АРМЯН

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

(1972 հունվար—հունիս)

ԲՈՒԼԳԱՐԻԱ

Սոֆիայի համալսարանում գործող հայոց լեզվի լեկտորիումում լսվել են մի շարք դասախոսություններ։

Փետրվարի 17-ին ուսանողների համար Սովետական Հայաստանի պարբերական մամուլի և հայկական ռադիոյի ու հեռուստատեսության ստեղծման և գործունեության մասին դասախոսել է Հ. Օրմանճյանը։ Հաջորդ դասախոսության թեման է «Յավորովը և հայերը»։ Ամեն հինգշաբթի նախատեսված է կազմակերպել նման դասախոսություն։

«Երևան», 25 փետրվարի

ՌՈՒՄԻՆԻԱ

Ռումինիայի հայ գաղութում փետրվարի 17-ին մեծ շուքով նշվեց Վարդանանց դյուցազնամարտի հիշատակը։

«Ջահակիր», 16 մարտի

* * *

«Նոր կյանքում» Հ. Ճ. Սիրունին ծավալուն հոդված է տպագրել Մարտիրոս Սարյանի մահվան առիթով։ Հոդվածում ներկայացված է վարպետը որպես նկարիչ և որպես մարդ։ Ջետեղված են Մարտիրոս Սարյանի դիմանկարը և «Մաղիկներ» կտավի արտանկարը։

«Նոր կյանք», 19 մայիսի

ԼԻԲԱՆԱՆ

Բեյրութում լույս է տեսել Դանիել Վարուժանի ստեղծագործությունների ֆրանսերեն նոր հրատարակությունը։ Հատընտիրում տեղ են գրտել բանաստեղծի շուրջ երեք տասնյակ բանաստեղծությունները, որ թարգմանել է բանաստեղծ Լյուք Անդրե Մարսելը։ Վերջինս գրել է նաև ներածական՝ նվիրված հայ պոեզիային և Դանիել Վարուժանի ստեղծագործությանը։

Ժողովածուում զետեղված են եվրոպական նշանավոր գրականագետների, բանաստեղծների և հասարակական գործիչների ասույթները Վարուժանի մասին։ Մեջբերված են Կանտի համալսարանի (որտեղ 1906—1909 թթ. ուսանել է Վարուժանը) ռեկտոր, պրոֆեսոր Լամբերեխտի, ականավոր հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդիի, Վարուժանի համալսարանական դասընկեր Պիեռ Մաեսի և այլոց ասույթները։

«Հայրենիքի ձայն», 19 հունվարի 1972

* * *

Բեյրութում հունվար-փետրվար ամիսներին ներկայացվել է Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» արարերենով լիբանանյան դերասանների կողմից։

«Ջահակիր», 17 փետրվարի

* * *

Բեյրութի հայ ավետարանական կոլեջի կողմից կազմակերպվել է «Սփյուռքը այսօր» ցուցահանդեսը, որտեղ ցուցադրվել են ամբողջ աշխարհում ապրող հայ գաղութների վերաբերյալ նյութեր, լուսանկարներ, ներկայումս հրատարակվող հայկական թերթերի նմուշներ։

Ցուցահանդեսի առիթով հրատարակված ալբոմում ցուցահանդեսի գլխավոր նախաձեռնողներից Զավեն Մսըրլյանը նշում է, որ կազմակերպիչները հավանականություն չունեն հայկական գաղթավայրերի լիակատար պատկերը տալ, այլ ջանացել են ծանոթացնել յուրաքանչյուր գաղութի «ազգային ձեռակերտները և հայապահպանման սատարող ազդակները»։

Ըստ «Սփյուռքը այսօր» ցուցահանդեսի տվյալների, սփյուռքահայության թիվը ներկայումս կազմում է 1.410.375, որ ցրված է ավելի քան 50 երկրներում։ Առավել հոծ հայություն կա Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ 400.000, Լիբանանում՝ 180.000, Սիրիայում՝ 135.000, Ֆրանսիայում՝ 175.000, Իրանում՝ 190.000, Թուրքիայում՝ 125.000։

Սփյուռքում լույս տեսնող պարբերականների ցուցակը պատրաստել է մատենագետ Արտաշես Տեր-Խաչատրյանը։ Ըստ այդ ցուցակի տվյալների, ներկայումս սփյուռքի քսան գաղթօջախներում լույս են տեսնում 14 օրաթերթ, 2 եռօրյա թերթ, 25 շաբաթաթերթ, 9 երկշաբաթա-

թերթ, 64 ամսաթերթ, 60 պատկերաթերթ, 13 տարեգիրք, ընդհանուր թվով 187 անուն։

«Սփյուռքը այսօր» ցուցահանդեսը մեծ հաջողություն է ունեցել։

«Հայրենիքի ձայն», 31 մայիսի

ՍԻՐԻԱ

Արաբ գրող էտիպ էլ-Սեյիդը գրել է «Հայաստանը արաբ պատմության մեջ» պատմական ծավալուն նկարագրդ աշխատությունը։

«Ջարթոնք», 23 հունիսի

ՆԹՈՎՊԻԱ

«Պայքարի» Քենիայի թղթակից Հովսեփ Թնգրյանը Ագիս-Արեբայից հայտնել է, որ այնտեղ գործում են հայկական եկեղեցի և դպրոց։ «Արարատ» ակումբը կազմակերպել է դասախոսություն, ուր Հ. Թնդրյանը խոսել է հայկական մշակույթի մասին։ «Արարատ» ակումբի հիմնադիրներից և դասախոսներից է Հայկաշեն Ուզունյանը, որը հաճախակի դասախոսություններ է կարդում հայրենիքի վերածննդի և զանազան գաղութների ազգային-հասարակական կյանքի մասին։

«Պայքար», 8 ապրիլի

ԹՈՒՐՔԻԱ

Մահացել է ստամբուլահայ անվանի բանաստեղծ Դուրգեն Թրենցը։

«Ջահակիր», 23 մարտի

ՖՐԱՆՍԻԱ

Վերջերս առանձին ժողովածուով հրատարակվել են Ե. Չարենցի ֆրանսերեն մի շարք բանաստեղծություններ։ Թարգմանությունը կատարել է ֆրանսիացի նշանավոր բանաստեղծ Լյուք-Անդրե Մարսելը, որը նախկիններում թարգմանել է Գրիգոր Նարեկացի, Դանիել Վարուժան և մի շարք այլ բանաստեղծների։

Հատորում զետեղված են Ե. Չարենցի 18 գործերը, հատվածներ «Ամբոխները խելագարված» և «Դանթեական առասպել» պոեմներից, «Սոմա», «Դեպի ապագան» պոեմները, «Ամենապոեմը», մի շարք քառյակներ, ռուբայաթներ և այլն։

Լյուք-Անդրե Մարսելը գրել է ընդարձակ առաջաբան, որտեղ վերլուծել և ըստ արժանվույն գնահատել է Եղիշե Չարենցի ստեղծագործությունները։

Ժողովածուի պատրաստման գործում Լյուք-Անդրե Մարսելին աջակցել է գրող Կարապետ Փոլատյանը։

«Հայրենիքի ձայն», 15 մարտի

ԱՆԳԼԻԱ

Անգլիահայ գաղութը մոտ 5000 հայերից է բաղկացած, որոնք կենտրոնացած են գլխավորապես Լոնդոնում։ Գաղութն ունի երկու եկեղեցի, եկեղեցուն կից նորակերտ սրահ և հայկական կենտրոն՝ Հայ Տունը։ Գործում են մի քանի կազմակերպություններ, որոնցից ամենից գործունը Հայ երիտասարդաց միությունն է իր 200 անդամներով։

1971 թ. հուլիսից սկսել է հրատարակվել «Արդարապատ» ամսաթերթը, մինչև այժմ լույս է տեսել վեց համար, որ ունի հայերեն և անգլերեն բաժիններ։ Թերթի պատասխանատու խմբագիրն է Հայկ Մսրլյանը։

Խմբագրությունը նպատակ ունի Լոնդոնի հայ գաղութի կյանքը աշխուժացնել, հիմնել հայկական դպրոց, հայկական մշակութային կենտրոն, կապ հաստատել հայկական այլ գաղութների հայ մամուլի հետ, ինչպես նաև մայր հայրենիքի հետ։

«Ջարթոնք», 5 հունվարի

* * *

Լույս է տեսել Հովհաննես Թումանյանի բանաստեղծությունների ժողովածուն «Լոռվա երգիչ» վերնագրով, որ թարգմանել և կազմել է Միշա Գյուտյանը։ Ինչպես հայտնում է «Լրաբերը», գրականագետ Դենիս Օզդենը «Մորնինգ Սթար» թերթի 1971 թ. նոյեմբերի 11-ի համարում այդ առթիվ գրել է. «Հայաստանը ունի աշխարհի ամենահին և ամենահարուստ մշակույթներից մեկը և Հովհաննես Թումանյանը, հայոց ազգային բանաստեղծը, որ ծնվել է ավելի քան մեկ հարյուրամյակ առաջ, նրա ամենամեծ անհատներից է»։

«Լրաբեր», 5 փետրվարի

* * *

Ապրիլի 23-ին Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցում տեղի է ունեցել ապրիլյան մեծ եղեռնի նահատակների հիշատակին նվիրված հուշարձանի բացումը։

Հուշարձանն իրենից ներկայացնում է խաչքար (որ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինն է ուղարկել էջմիածնից)՝ հաստատված մարմարյա պատվանդանի վրա։

«Ջարթոնք», 5 մայիսի

ԻՏԱԼԻԱ

Վենետիկի Մխիթարյան տպարանը հրատարակել է Նոր Ջուղայեցի տաղարան և մանկավարժ Գևորգ Չոհրաբյանի անտիպ տաղերը, որոնք գաղափար են տալիս Նոր Ջուղայի ժողովրդի հոգեկան ապրումների, կենցաղային սովորությունների մասին։ Գ. Չոհրաբյանն ապրել է XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին։ Նրա-

տաղերը մեծ մասամբ կենցաղային ազգագրական բնույթ ունեն։

«Լրաբեր», 4 դեկտեմբերի 1971

* * *

«Զարթոնքի» թղթակիցը հարցազրույց է ունեցել ճարտարապետ Հերման Վահրամյանի հետ, որն աշխատում է Միլանի հայկական ճարտարապետության կենտրոնում։ Կենտրոնի գործունեության մասին նա հայտնել է, որ 1962-ից ըսկըսած Միլանի ճարտարապետների խումբը (Արմեն Մանուկյան, Ադրիանո Ալպագո Նովելլո, Հարություն Գազանճյան և Հերման Վահրամյան), որն ունի նաև շատ օտարազգի (իտալացի և գերմանացի) աշխատակիցներ, Միլանի հայ մշակութային միության համագործակցությամբ 1964-ին կազմակերպել է մեծ ցուցահանդես, հրատարակել է «Տուրումենթի տի արշիթեքթուրա Արմենա»-ի առաջին հատորը՝ նվիրված Հաղբատի ճարտարապետական կոմպլեքսին։ Մինչև այսօր լույս են տեսել ևս երեք հատոր՝ «Խաչքար», «Սանահին» և «Ս. Թադևոսի վանքը»։

Շուտով լույս են տեսնելու «Աղթամար», «Գեղարդ», «Ամբերդ» և այլ հատորները, որ հրատարակության են պատրաստվել ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի համագործակցությամբ։ Պատրաստված է «Անի քաղաք» գիրքը (իտալերեն)։ Ցուցահանդեսը Միլանից բացի ցուցադրվել է Փարիզում, Ճենովայում, Վիեննայում, Ռուենոս-Այրեսում, պետք է ցուցադրվի նաև Լիսաբոնում և Տորոնտոյում։

«Զարթոնք», 3 մարտի

ՇՎԵՅՑԱՐԻԱ

Ժընևից Գառնիկ Տեր-Հակոբյանը հայտնում է, որ Շվեյցարիայում նույնպես գոյություն ունի մի փոքրաթիվ հայ գաղութ։ Ժընևում գործող Հայ երիտասարդաց միությունը ապրիլի 30-ին ճոխ հայտագրով երեկո է կազմակերպել, որին ներկա են գտնվել 200 մարդ։

«Հայրենիքի ձայն», 31 մայիսի

ԿԱՆԱԴԱ

Մոնրեալում լույս տեսնող «Տհը Ճորճիըն» օրաթերթի 1972 թ. հունվարի 25-ի համարում ասված է, որ Սըր Ջորջ Ուիլյամս համալսարանը 1972 թ. հունվարի 14-ին հաստատել է հայագիտական դասընթաց, որը ղեկավարում է դոկտ. Գևորգ Պաղճյանը. դասավանդվելու են հայոց պատմություն, հայկական բարքերի և հայկական հիմնարկների մասին առարկաներ։ Դասընթացի նպատակն է ավելի մոտիկից ծանոթացնել հայ ազգային պատմությանը։

«Զարթոնք», 12 փետրվարի

* * *

Մոնրեալի հայ առաքելական եկեղեցին ըսկըսել է հրատարակել «Ռուբաստան» անունով ամսաթերթ։ Թերթում տպագրվում են հատվածներ հայ գրականությունից, ընդարձակ տեղեկություններ ազգային կյանքից և այլն։

«Նոր օր», 3 մարտի

* * *

Մոնրեալի Թեքեյան մշակութային միության կենտրոնում հաճախ կազմակերպվում են հայկական հավաքներ։ Փետրվարի 26-ին տեղի է ունեցել Ավարայրի ճակատամարտի հիշատակին նվիրված տոնակատարություն, որի ժամանակ զեկուցումներ են կարդացվել հայ ազատագրական շարժման մասին։ Մարտի 11-ին կազմակերպվել է Սայաթ-Նովային նվիրված երեկո։

«Պայքար», 16 ապրիլի

* * *

Մոնրեալի Սըր Ջորջ Ուիլյամս համալսարանի հայագիտական ամբիոնի նախաձեռնությամբ մարտի 14-ին տեղի է ունեցել երեկո՝ նվիրված Պետրոս Դուրյանի մահվան 100-ամյակին, Դուրյանի մասին դասախոսել է հայագիտական ամբիոնի դասախոս պրոֆ. Գևորգ Պաղճյանը, այնուհետև արտասանվել են Դուրյանի բանաստեղծություններից։

«Արարատ», 19 ապրիլի

* * *

Մոնրեալում, անհայտ զինվորի գերեզմանի մոտ, ապրիլի 22-ին մեծ ցույց է կազմակերպվել ի հիշատակ 1915 թ. Եղեռնի զոհերի, որին մասնակցել են մշակութային բոլոր կազմակերպությունները, ինչպես նաև Կանադայի պետական բարձրաստիճան գործիչներ՝ մոտ 2500 մարդ։ Եղել են հայերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզվով ելույթներ։

«Ջահակիր», 4 մայիսի

ԱՄՆ

Հարվարդի համալսարանի հնագիտական և ազգագրական թանգարանը անգլերեն լեզվով լույս է ընծայել Բ. Առաքելյանի «Գառնի» աշխատությունը, որը հրապարակված է «Թարգմանություններ ռուսերենից» մատենաշարով։ Թարգմանության կազմակերպիչն է ամերիկացի նշանավոր հնագետ և մարդաբան Հենրի Ֆիլտը։ Գիրքը, որ կրում է «Ներդրումներ հայ հնագիտության մեջ» խորագիրը, հիմնականում ամփոփում է Գառնիի պեղումներին նվիրված ուսումնասիրություններ, 180 նկարներ։ Գրքում «Երկիրը և բնակչությունը» վերնագրով մասում համառոտ տեղեկություններ է տրվում Հայաստանի մասին, հոդվածներ են զետեղված Լճաշենում հայտնաբերված մնացորդների, Արագածում և

Արմաղանում պրոֆ. Ա. Քալանթարի հայտնաբերած ժայռապատկերների մասին և այլն։

«Շարժում», 18 դեկտեմբերի 1971

* * *

Լոս-Անջելոսի համալսարանի հայկական ամբիոնը գնել և Լոս-Անջելոս է տեղափոխել մահացած մի պարսկահայի կողմից ժողովված ձեռագիր մատյանների, պատառիկների, հայերեն և պարսկերեն վավերաթղթերի մեծ հավաքածու։

«Ջահակիր», 13 հունվարի

* * *

Լույս է տեսել Տիգրան Պոյաճյանի «Հայաստան՝ մոռացված ցեղասպանության մը դատը» գիրքը անգլերեն, 640 էջով։ Գրքում պատմական տվյալներին զուգընթաց բերված են օտարազգի ականավոր անձանց կոչերը թուրքական ցեղասպանության դեմ։

«Ջարթոնք», 18 հունվարի

* * *

Ուոթերթաունի ամերիկյան վարժարաններում արդեն երկրորդ տարին է, որ ուսանողներին դասավանդվում է հայոց լեզու, որպես մեկը ընտրված մի քանի օտար լեզուների հետ միասին։ Այս ձեռնարկության պահանջն այժմ ավելի է լրջացել Հարվարդում, Կոլումբիայում, Կալիֆորնիայում և մի շարք այլ համալսարաններում տարվող հայագիտական ուսումնասիրությունների շնորհիվ։

«Նոր օր», 25 փետրվարի

* * *

Նյու-Յորքի քաղաքապետ Ճան Լինդզը փետրվարի 10-ը հայտարարել է Վարդանանց օր Նյու-Յորքում. հանդիսավոր այս արարողությանը մասնակցել են հայ համայնքի ղեկավարներ։

«Ջահակիր», 2 մարտի

* * *

Ամերիկայի հայոց առաջնորդարանը 1971 թ. Կյուլապի Կյուլպենկյան մշակութային կենտրոնում հաստատեց հայկական թանգարան, որտեղ հավաքվեցին հայ գրական, նկարչական, գրչագրական և ձեռարվեստի դասական գործեր։ Արդեն ցուցադրվել են Հ. Հազարյանի հին գրքերի, գրչագրությունների, ինչպես նաև նկարչական և բրուտագործական հավաքածուները։ Այժմ ցուցադրվում է դոկտ. Պոլ Պըտուկյանի հայկական հին դրամների հավաքածուները։

«Պայքար», 3 մարտի

* * *

Հայագիտական ուսմանց հետազոտությունների ազգային ընկերակցությունը Ուոթերթաունի Հոսմըր դպրոցի դահլիճում կազմակերպել է հայագիտական գրքերի ցուցահանդես, որտեղ ցուցադրվել են օտար լեզուներով հրատարակված ավելի քան հիսուն գրքեր։ Ցուցադրված հայագիտական գրքերի թվում հիշատակելի են անգլիացի կովկասագետ և հայագետ Դեվիդ Մարշալլ Լենգի վերջերս լույս տեսած «Հայաստանը քաղաքակրթության օրրան», Մարջորի Հովսեփյանի «Իզմիրի աղետը», անվանի բյուզանդագետ Սիրարփի Տեր-Ներսեսյանի «Հայերը», պրոֆ. Ավետիս Սանճյանի «Հայկական ձեռագրերի հիշատակարաններ» և այլ գրքեր։ Մեկ շաբաթ տեւած այս ցուցահանդեսի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ Մարջորի Հովսեփյանի, պրոֆ. Դեվիդ Լենգի և մի շարք այլ հեղինակների հետ։ Հայաստանի և հայերի մասին պրոֆ. Լենգը ասել է. «Հայաստան այցելողը առաջին հերթին տպավորվում է ժողովրդի կենսունակությունից, մի բան, որ ուրախացնում է հայ ժողովրդի յուրաքանչյուր բարեկամի»։

Ցուցադրվել է նաև Միքայել Հարությունյանի պատրաստած «Պատմական Հայաստանում» վավերագրական գունավոր կինոնկարը, որը պատմում է հայկական նախկին մշակութային կենտրոնների և ճարտարապետական հուշարձանների ներկա վիճակի մասին։ Ֆիլմում նկարահանված են Ադանան, Խարբերդը, Այնթապը, Մշոդաշտը, Վանա լիճը, Բիթլիսը, Ախթամարը, Վանը, Կարսը, Անին։ Այնուհետև ցուցադրվում է Սովետական Հայաստանը։

Ցուցահանդեսը և հարակից միջոցառումները մեծ հետաքրքրություն են առաջացրել և լայն արձագանք գտել մամուլում։

«Հայրենիքի ձայն», 8 մարտի

* * *

Ջորջթաունի համալսարանը նորից սկսել է հայոց պատմության և հայ մշակույթի դասընթացները։ Դասավանդվելու են պատմական Հայաստանի աշխարհագրություն, Ուրարտու, Պատմական Հայաստան, Հայ գրականության տեսություն և այլն։

«Արև», 15 մարտի

* * *

Կլիվլենդի հայ համայնքը ապրիլի 9-ին կատարել է մշակութային կենտրոնի, ինչպես նաև հայկական վարժարանի բացումը հայկական եկեղեցուն կից, որը 8 տարի առաջ կառուցված առաջին հայկական եկեղեցին էր Օհայոյում։

«Ջարթոնք», 18 ապրիլի

* * *

Մի խումբ ամերիկահայ երիտասարդներ, որոնք անցյալ ամառ այցելել են Սովետական Հայաստան, գունավոր ժապավեն են պատրաս-

տել «Օշականի Ս. Սարգիս եկեղեցու մեջ, հովիվներու հետ» խորագրով։

Այս նույն խումբը երկու տարի առաջ Հայաստան այցելելուց հետո պատրաստել էր իր առաջին ժապավենը, կոչելով այն «Մենք Հայաստան այցելեցինք», որը ցուցադրվել էր 30-ից ավելի հայաշատ քաղաքներում։

«Պայքար», 26 ապրիլի

ՄԱՐՈԿԿՈ

Կասարլանկայի բնակիչ Գ. Հարությունյանը քաղաքապետարանին նվիրել է 1,5 միլիոն ֆրանկի արժողություն ներկայացնող հողամաս, որի փոխարեն մի փողոց անվանվել է «Հայաստանի փողոց» («Ռյու դ'Արմենի»)։

«Լրաբեր», 29 փետրվարի

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ։